## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«19» ապրիլի 2014թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 7-ի N 28 Ա որոշումը՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ՝ Ի.Աղասարյանի, ՀԳՄՀ բաժնի վարիչ Հ. Օհանյանի, մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ Մ. Ղուրշուդյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ Գոռ Ղազարյանի, աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ Անդրոնիկ Մնացականյանի, քաղաքաշինության վարչության պետի տեղակալ Խաչատուր Բուդումյանի, աշխատակազմի ԱՍԱ վարչության առողջապահության բաժնի վարիչ Մեխակ Այվազյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՏԻՄ-ի պարտադիր լիազորությունների, կրթության, սպասարկման, առողջապահության, քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառներում ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը, կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Վերին Գետաշեն համայնքի ղեկավարին:

ԻՎԱՆ ՄԱՍՏՐՅԱՆ

ՀՐԱՆԴԻԿ ՕՀԱՆՅԱՆ

ՄԻՆԱՍԱԿՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ԳՈՌ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԻՍ ԴՈՒՐԾՈՒԽՅԱՆ

ԲՈՒԳՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԱՅՎԱԶՅԱՆ ՄԵԽԱԿ

Համայնքի ղեկավար Ռուբիկ Ղուկասյան